Հայաստանի Հանրապետության վարչապետ
Նիկոլ Փաշինյանին

ՀՀ Արդարադատության նախարար
Սրբուհի Գալյանին

Պատճենը
ՀՀ փաստաբանների պալատի նախագահ
Սիմոն Բաբայանին

4 Նոյեմբեր 2025, Բրյուսել

Հարգելի վարչապետ,
Արդարադատության հարգելի նախարար,

Գրում եմ ձեզ որպես Եվրոպայի փաստաբանների և իրավաբանական միությունների խորհրդի (CCBE) նախագահ, որը ներկայացնում է 46 երկրների փաստաբանական և իրավաբանական միություններ և դրանց միջոցով՝ ավելի քան 1 միլիոն եվրոպացի փաստաբանների։

Եվրոպայի փաստաբանների և իրավաբանական միությունների խորհուրդը ներկայացնում է եվրոպական փաստաբանական և իրավաբանական միությունների ընդհանուր շահերը եվրոպական և միջազգային հաստատություններում և պարբերաբար հանդես է գալիս որպես կապող օղակ իր անդամների և եվրոպական հաստատությունների, միջազգային կազմակերպությունների և աշխարհի այլ իրավաբանական կազմակերպությունների միջև: Արդարադատությանը հասանելիությունը, իրավաբանական մասնագիտության հիմնական արժեքների խթանումը և պաշտպանությունը, իրավունքի գերակայության, մարդու իրավունքների և ժողովրդավարական արժեքների պաշտպանությունը CCBE-ի ամենակարևոր առաքելություններն են: Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը CCBE-ի դիտորդ անդամ է:

Այս հիմնական սկզբունքներին 65 տարվա նվիրվածությամբ և լայն անդամակցությամբ՝ CCBE-ն լայնորեն ճանաչված է՝ Եվրոպական Միության, Եվրոպայի խորհրդի և այլ միջազգային հաստատությունների կողմից՝ որպես եվրոպական իրավաբանական մասնագիտության ձայնը։

Փաստաբանները կարևոր դեր են խաղում ժողովրդավարական հասարակություններում: Նրանք ոչ միայն անհատական իրավունքների և ազատությունների պաշտպաններ են, այլև իրավունքի գերակայության պահապաններ: Արդարադատության իրականացման գործում նրանց անկախ գործառույթը կարևոր է ժողովրդավարության պատշաճ գործառնման համար: Փաստաբանների դերը հասարակությունում ճանաչվել է Եվրոպայի խորհրդի 2000

թվականի հոկտեմբերի 25-ի փաստաբանական մասնագիտության ազատության վերաբերյալ թիվ R (2000) 21 Հանձնարարականով, ՄԱԿ-ի 1990 թվականի դեկտեմբերի 14-ի փաստաբանների դերի վերաբերյալ հիմնարար սկզբունքներով և 2025 թվականի մայիսին ընդունված Եվրոպայի խորհրդի փաստաբանի մասնագիտության պաշտպանության մասին կոնվենցիայով:

ՀՀ փաստաբանների պալատը CCBE-ին տեղեկացրել է պետության կողմից երաշխավորված իրավաբանական օգնություն տրամադրող հանրային պաշտպանների աշխատանքային ծանրաբեռնվածության աճի վերաբերյալ լուրջ մտահոգությունների մասին: Ստացված տեղեկատվության համաձայն՝ վերջին տարիներին Հանրային պաշտպանի գրասենյակը գրանցել է գործերի թվի զգալի և կայուն աճի, մինչդեռ պետության կողմից ֆինանսավորվող հանրային պաշտպանների թիվը նվազել է:

Իրավաբանական օգնությունը արդարադատության հասանելիության անկյունաքարն է: Այդ պատճառով CCBE-ն կարևոր է համարում, որ կառավարությունները ապահովեն իրավաբանական օգնության համար բավարար և կայուն ֆինանսավորում, և որ իրավաբանական օգնության բյուջեի կազմման գործում բովանդակալից կերպով խորհրդակցեն իրավաբանական օգնություն մատուցողների հետ: Այս սկզբունքը հստակորեն ընդգծված է CCBE-ի իրավաբանական օգնության վերաբերյալ Հանձնարարականներում, մասնավորապես՝ 4.3 Հանձնարարականում:

Հանրային պաշտպանների թվի կրճատումից բացի, որն արդեն իսկ խորապես մտահոգիչ զարգացում է ձեր երկրում արդարադատության մատչելիության համար, CCBE-ն նաև տեղեկացվել է ՀՀ հարկային օրենսգրքում փաստաբանների կողմից մատուցվող իրավաբանական ծառայությունների հարկման մասով վերջերս կատարված փոփոխությունների վերաբերյալ: Այս փոփոխությունները, որոնք ուժի մեջ են մտել 2025 թվականի սկզբից, զգալիորեն ավելի ծանր հարկային բեռ են դնում իրավաբանական ծառայություններ մատուցողների վրա, ինչը իրավաբանական օգնությունը դարձնում է քաղաքացիների համար պակաս մատչելի և դրանով իսկ ավելի է խաթարում արդարադատության մատչելիությունը:

CCBE-ն տեղեկացվել է, որ այս փոփոխությունները ներկայացվել են առանց Փաստաբանների պալատի կամ Հայաստանի ավելի լայն իրավաբանական համայնքի հետ նախնական խորհրդակցությունների, ինչպես նաև հաշվի չեն առնվել այլ համապատասխան շահագրգիռ կողմերի, ինչպիսին է Մարդու իրավունքների պաշտպանի կարծիքը: Նման մոտեցումը ևս անհամատեղելի է վերջերս ընդունված «Փաստաբանի մասնագիտության պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի հետ: Կոնվենցիայի 4.3 հոդվածը պահանջում է, որ ստորագրող պետությունները «ապահովեն, մասնագիտական միավորումների հետ ժամանակին և արդյունավետ կերպով խորհրդակցության անցկացումը կառավարության կողմից ներկայացված օրենսդրական, ընթացակարգային և վարչական կանոնների ցանկացած փոփոխության վերաբերյալ առաջարկությունների համար, որոնք անմիջականորեն ազդում են փաստաբանների մասնագիտական գործունեության և մասնագիտության կարգավորման վրա»:

Եվրոպայի փաստաբանների և իրավաբանական միությունների խորհուրդը (CCBE)-ն անընդունելի է համարում ՀՀ-ում փաստաբանների աշխատանքի վրա ազդող օրենսդրական փոփոխությունների ընդունումը՝ առանց Փաստաբանների պալատի հետ բովանդակալից խորհրդակցությունների: Հետևաբար, մենք կոչ ենք անում ՀՀ իրավասու մարմիններին ապահովել Փաստաբանների պալատի լիարժեք ներգրավվածությունը փաստաբանների մասնագիտական գործունեությանը անմիջականորեն ազդող ցանկացած օրենսդրական նախաձեռնությանը, այդ թվում՝ հարկային փոփոխություններին վերաբերող, նրանց մտահոգությունները լուծելու և անհրաժեշտության դեպքում վերանայումներ կատարելու համար:

Ի լրումն, CCBE-ն Հայաստանի կառավարությանը հորդորում է ստորագրել և վավերացնել «Փաստաբանի մասնագիտության պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան: Այդպիսով, Հայաստանը ցույց կտա իր անսասան հանձնառությունը իրավունքի գերակայությանը, իրավաբանական մասնագիտության պաշտպանությանը և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով ամրագրված սկզբունքներին: Նման քայլը նաև կամրապնդի հանրային վստահությունը արդարադատության համակարգի նկատմամբ և կնպաստի բոլոր քաղաքացիների արդարադատության իրական և հավասար հասանելիության ապահովմանը:

Անկեղծորեն Ձեր,

Թիերի Վիքերս

Եվրոպայի փաստաբանների և իրավաբանական միությունների խորհրդի նախագահ